

## ՄԵՆԻՄԱՍ ԲԱՌԵՐԸ ՀԱԳՈՒՍՏ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԹԵՄԱՏԻԿ ԽՄԲՈՒՄ

### ՂԱՄՈՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ

Բանասիրական գիտությունների թեկնածու  
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող  
Էլիոսա՝ lgamoyan@mail.ru

**Հագուստը իմաստային թեմատիկ խմբի բառերը լինում են մենիմաստ ու բազմիմաստ: Մենիմաստ բառերն ըստ կազմության լինում են արմատական, ածանցավոր, բարդ և բարդածանցավոր: Գրաբարից արդի հայերենին են անցել մի քանի բազմիմաստ հագուստի անվանումներ, որոնք այժմ մենիմաստ են: Բազմաթիվ մենիմաստ բառեր կան նաև արևմտահայերենում ու բարբառներում: Հագուստը իմաստային դաշտում հանդիպում են նաև մենիմաստ փոխառյալ բառեր ու նորակազմություններ: Այս խմբի բառանուններից կազմվել են նաև բազմաթիվ մենիմաստ դարձվածային միավորներ: Մենիմաստ բառի նշանակությունը, ի տարբերություն բազմիմաստ բառի, կարելի է որոշել ամեն մի կապակցությունից դուրս: Հագուստը իմաստային թեմատիկ խումբը թեև հարուստ է մենիմաստ բառերով, բայց պետք է հաշվի առնել այն, որ բառի իմաստը, լինելով պատմական երևույթ, ենթակա է փոփոխության, այսինքն՝ բառը կարող է ձեռք բերել նոր իմաստ կամ իմաստներ՝ դառնալով բազմիմաստ կամ հակառակը, կորցնելով իմաստներ, կարող է դառնալ մենիմաստ:**

**Բանալի բառեր՝** մենիմաստ, հագուստ, արմատական, ածանցավոր, բարդ, բարդածանցավոր, փոխառություն, արևմտահայերեն, բարբառ, նորակազմություն:

Ամեն մի լեզու իր հաղորդակցական կարևորագույն դերը (գործառույթը) իրացնում է բառերի շնորհիվ, որոնցում արտացոլվում է մարդու հասարակական և ճանաչողական փորձը, ժողովրդի պատմությունը, ժողովրդի մտածողությունը:

Իբրև ինքնուրույն գործածություն ունեցող իմաստակիր միավոր՝ բառը հանդես է գալիս ձևի և բովանդակության միասնությամբ, և այդ ձևերի ու դրանց իմաստների, ինչպես նաև բովանդակության փոխհարաբերության միջև նկատվում է այն օրինաչափությունը, որ յուրաքանչյուր բառ կարող է

ունենալ մի քանի իմաստ, կամ, ընդհակառակը, յուրաքանչյուր իմաստ կարող է ունենալ տարբեր ձևական կառուցվածք: Ըստ այդմ էլ *հագուստ* իմաստային թեմատիկ խմբում առանձնացրել ենք *մենիմաստ* և *բազմիմաստ* բառեր, սակայն սույն հոդվածում մեր ուսումնասիրության առարկան մենիմաստ բառերն են<sup>1</sup>:

Առաջնորդվելով հետևյալ դրույթով՝ «որքան երկար է բառի «կյանքը», այսինքն՝ նրա գործածությունը լեզվի մեջ, այնքան հարուստ է նրա բովանդակությունը և այնքան շատ են նրա իմաստները»<sup>2</sup>, էդ. Աղայանն ու այլ լեզվաբաններ այն համոզմունքին էին, որ «բառերի մեծագույն մասը բազմիմաստ բառեր են, և մենիմաստ բառերը շատ փոքր քանակություն են կազմում»<sup>3</sup>: Առաջին հայացքից թվում է, թե *հագուստ* իմաստային թեմատիկ խմբում բազմիմաստ բառերը ևս գերակշիռ մաս են կազմում, սակայն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դա այդքան էլ այդպես չէ:

*Հագուստ* իմաստային խմբում հանդիպում ենք բազմաթիվ մենիմաստ բառեր՝ կազմությամբ պարզ, բարդ և ածանցավոր: Այսպես՝

ա) **մենիմաստ պարզ բառեր**, որոնք հիմնականում գոյականով են արտահայտված, ինչպես՝ **գդակ** «գլխարկ», **գրպան** «զգեստի վրա կարված քսակաձև հարմարանք՝ զանազան մանր իրեր և դրամ պահելու համար», **գուլպա** «ոտքի թաթերն ու սրունքները ծածկող գործված հագնելիք», **քուղձ** «հնամաշ հագուստ, ցնցոտի, քուրջ», **արխալուղ** «տղամարդկանց և կանանց մինչև ծնկները հասնող ծալքավոր փեշերով, առջևից կոճկվող հագուստ», **գազ** «մետաքսյա նուրբ թափանցիկ գործվածք, շղարշ», **կոշիկ** «կաշվից կամ այլ նյութերից կարվող, ոտքին հագնելու հարմարանք, ոտնաման» և այլն,

բ) **մենիմաստ ածանցավոր բառեր**՝ հետևյալ կաղապարներով՝

- **նախածանց+արմատ**, ինչպես՝ **անթեզան** «առանց թեզանիքի, առանց հագուստի երկար թևերի», **համազգեստ** «պաշտոնական հատուկ միատեսակ զգեստ», **նախակար** «սկզբնական՝ առաջին կար»,

- **արմատ+վերջածանց**, ինչպես՝ **գիշերանոց** «գիշերը քնելիս հագնելու երկար շապիկ, գիշերազգեստ», **թաթնոց/թաթպան** «ձեռնոց», **թասակ** «բլուրակ, թասաձև գլխարկ», **թիկնոցակ** «փոքրիկ թիկնոց», **ձեռնոց** «թելից հյուսած՝ կաշվից կամ կտորից կարած ձեռքի հագնելիք, թաթպան»,

<sup>1</sup> Բազմիմաստ բառերին կանդրադառնանք առանձին հոդվածով:

<sup>2</sup> Էդ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Ե., 1984, էջ 48:

<sup>3</sup> Նույն տեղը, էջ 47:

**փոխնորդ** «երկու կամ ավելի ձեռք սպիտակեղեններից յուրաքանչյուրը, որ փոխնիփոխ հագնում է մեկը», **քրջեղեն** «քրջից շինած, քրջից պատրաստված (շոր), ցնցոտի», **անձրևանոց** «անձրևաթիկնոց»,

• **նախածանց+արմար+վերջածանց**, ինչպես՝ **անթևոցիկ** «թիկնոց», **արտահագուստ** «հատուկ հագուստ՝ վերնագգեստ, որը հագնում են աշխատանքի ժամանակ» և այլն:

**զ) Մենիմասոք բարդ բառեր**, որոնք կարող են արտահայտվել հետևյալ կաղապարներով՝

• **գոյական+գոյական**՝ ա հոդակապով բաղադրություններ, ինչպես՝ **բարուրաշոր** «բարուրի շոր», **գլխալաչակ** «կանացի եռանկյունի գլխաշոր», **գլխաշալ** «գլխի շալ», **գլխաշոր** «գլուխը կապելու շոր, գլխի թաշկինակ (առավելապես կանանց)», **երեսաքող** «երեսը ծածկելու քող», **թաթաշոր** «նորածին մանկան թաթիկները՝ թևերը փաթաթելու շոր», **ժամաշապիկ** «(եկեղ.) (երկար սպիտակավուն ու լայն թևքերով հագուստ, որ հագնում են աբեղաները՝ տիրացուները պատարագի ու ժամասացության պահին», **լանջագրպան** «հագուստի կրծքամասի գրպան. դրսի կողմից, ներսինը կոչվում է ծոցագրպան», **կրծագգեստ** «կուրծքը պատելու կանացի զգեստ, կրծակալ, կրծկալ», **կրկնակոշիկ** «խոնավությունից պահպանելու համար կոշիկի վրա հագնելու ռետինե ոտնաման» և այլն, **ե** հոդակապով՝ **ուղեզգեստ** «ճամփորդության զգեստ»:

Այս կաղապարով անհոդակապ կազմություններից են՝ **երեսլաթ** «երեսը ծածկելու շոր՝ քող», **ուսարկ** «անթև վերարկու» և այլն:

• **Ածական+գոյական** (կամ եռաբաղադրիչ՝ **ածական+գոյական+գոյական**), ինչպես՝ **թավշադիպակ** «թավշանման դիպակ», **բեմազգեստ** «թատերական՝ բեմական զգեստ», **թաղեգլխարկ** «թաղիքե գլխարկ, թաղիքից պատրաստված գլխարկ», **լայներիզ** «լայն երիզներ ունեցող», **կարճագգեստ** «կարճ հագուստ՝ զգեստ ունեցող՝ հագած», **կեղծօձիք** «ոչ իսկական՝ դնովի օձիք», **լայնաքղանց** «լայն քղանցքներ ունեցող, լայնափեշ» և այլն,

• **գոյական+բայարմար**, ինչպես՝ **գլխափաթաթ** «գլխի փաթաթան, գլուխը փաթաթելու շոր», **հողաթափ** «կիսաբաց երեսով և առանց կրունկների ոտնաման», **գլխակապ** «գլուխը կապելու շոր, գլխաշոր», **փողկապ** «լայն ժապավենաձև կարված կտոր, որ օձիքի շուրջը օղակաձև անցնելով հանգույցով կապվում է կրծքի վրա» և այլն,

դ) **բարդածանցավոր բառեր**, ինչպես՝ **թավշաբաճկոնակ** «թավիշից կարված փոքրիկ բաճկոն», **լողաթիկնոց** «լողանքից հետո վրան գցելու

թիկնոց», **լողահագուստ** «լողազգեստ», **շքեղազգեստ** «շքեղ՝ ճաշակով հագնված, շքեղ հագած», **ուսածածկոց** «ուսերի ծածկոց՝ շալ» և այլն:

Կան բազմաթիվ մենիմաստ բառեր, որոնց մեջ նկատվում է որոշ ձևային բառակազմական ակտիվացում. այսպես՝ **կարմիր**- ածականը, որպես սկզբնաբաղադրիչ, բավական հաճախադեպ է, ինչպես՝ **կարմրաշոր** «կարմիր շոր հագած», **կարմրազգեստ**, **կարմրաստառ** «կարմիր աստառ ունեցող», **կարմրավզկապ** «կարմիր վզկապ կապած», **կարմրափողկապ** «կարմիր փողկապ կապած, կարմիր փողկապով», **կարմրաքող** «կարմիր քող կրող, կարմիր գույն ունեցող քողով», **կարմրօձիք** «(հզվդ.) կարմիր օձիք ունեցող, կարմիր օձիքով» և այլն: Այդպես նաև **կիսա**- բաղադրիչով հաճախակի հանդիպող մենիմաստ բարդ և բարդաձանցավոր բառերից են՝ **կիսակոշիկ** «կարճավիզ կոշիկ, մուճակ», **կիսածեռնոց** «մատների միայն մի մասը ծածկող ձեռնոց», **կիսավերարկու** «կարճ վերարկու (ծնկներից ոչ ցածր)», **կիսամուշտակ** «կարճ մուշտակ», **կիսաշալ** «գլուխը կապելու եռանկյունաձև շալ», **կիսավարտիք** «կարճ վարտիք» և այլն:

Ինչպես նկատեցինք, **հագուստ** իմաստային դաշտը հարուստ է մենիմաստ բարդություններով:

Պետք է նկատել, որ վերոնշյալ մենիմաստ բառերի մեծ մասը չկան ո՛չ գրաբարում, և ո՛չ էլ միջին հայերենում, այսինքն ավելի ուշ շրջանում կազմված բառեր են, ինչով էլ, մեր կարծիքով, բացատրվում է դրանց մենիմաստությունը, իսկ եթե կան ապա դարձյալ մենիմաստ են:

Այս թեմատիկ դաշտում հանդիպող նոր փոխառություններից մենիմաստ են նաև հետևյալ բառանունները՝ **ժակետ** «կանացի կարճ վերնազգեստ (հատկապես բրդից կամ բամբակից գործված)», **ժիլետ** «տղամարդու անթև՝ անօձիք՝ կարճ զգեստ, որ հագնում են վերնաշապիկի վրա, պիջակի տակ. անթև բաճկոնակ», **կոֆտա** «կանացի կարճ (սովորաբար մինչև գոտկատեղը) զգեստ, բաճկոնակ», **ֆրակ** «տղամարդկանց մահուդե պաշտոնական երկար զգեստ, առջևը մեջքից վար բաց, պոչազգեստ», **ֆրենչ** «գինվորական կարճ զգեստ՝ կաշվե գոտիով և դրսից չորս խոշոր գրպաններով», **կորսետ/կորսեթ** «սեղմիրան, իրանասեղմ», **ֆուրաժկա/ֆուրաշկա** «գլխարկ իր բոլորքով և առաջամասի հովհարով» և այլն<sup>1</sup>:

<sup>1</sup> Վերոնշյալ բոլոր օրինակները տե՛ս *Ժամանակակից հայոց լեզվի բացադրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1969-1980:

Պետք է նկատել, որ մենիմաստ բառի նշանակությունը, ի տարբերություն բազմիմաստ բառի, կարելի է որոշել ամեն մի կապակցությունից դուրս, քանի որ այն կրում է բացարձակ բնույթ և խոսքային սահմանափակում չունի:

Արդի արևմտահայերենում հանդիպող մենիմաստ *հագուստի* անվանումներից են՝ **խրխի** «ոչխարի մորթուց մուշտակ», **կրկնազգեստ** «թիկնոց, անձրևանոց», **համտակ** «քղանցք, զգեստի ներքևի մասը», **մեկնոց** «վերարկու», **մուճակ** «հողաթափ, չստիկ», **մոմշոր** «ջրի դեմ անթափանց շոր (նորածինի, անձրևի)», **ներքնագրպան** «ծոցագրպան», **սարմուճակ** «կրկնակոշիկ», **սուլազգեստ** «ծովի հատակը իջնելու հատուկ զգեստ» և այլն<sup>1</sup>:

Բարբառները նույնպես հարուստ են ինչպես բազմիմաստ, այնպես էլ մենիմաստ *հագուստի* անվանումներով, որոնց մեջ անշուշտ շատ են փոխառությունները, ինչպես՝ **առշալ** «Պլ. լանջաբաց բաճկոն», **բենիշ** «ՆԲ վերարկու», **բեջլաթ** «ոռաշոր», **գաբալուշ** «Առտ. գլխարկ», **գելուզա** «Սվր. քահանայի փակեղ՝ գլխարկ», **գլխնոց** «Մլթ. գլխարկ», **գյուֆ** «Մրշ. կանացի հնաձև գլխարկ», **դեմկապոց** «Խտջ. գոգնոց», **երեսանկ** «փայտե ոտնաման առանց երեսի, նալիկ», **զբաբուկ** «Առտ. հողաթափ», **լատան** «Վն. գուլպա», **լափչուն** «Հվր. կարճ ճութերով կոշիկ», **ծլափան** «Գնձ. հողաթափ», **ծնզնաշոր** «Կքվ. կանացի վարտիք», **կեճեղիք** «Ամս. գիշերազգեստ», **կոլակապ** «ՆՋ վզկապ», **ձեռնաման** «Ղրբ. ձեռնոց, թաթման» և այլն<sup>2</sup>:

Նշենք, որ գրաբարից գրական ժառանգորդությամբ արդի հայերենին են անցել շատ բառեր, որոնք թեև բազմիմաստ են եղել, այժմ գործածվում են որպես մենիմաստ բառեր, ինչպես՝ **ասր** բառանունը գրաբարում բազմիմաստ էր՝ «1. ոչխարի բուրդ (մանաւանդ կտրած և մաքրած՝ սպիտակ), գեղմ, 2. ասուեղէն՝ բրդէ հագուստ», այժմ գործածվում է միայն մեկ իմաստով՝ «(հնց.) բուրդ, գեղմ»: Կամ՝ գրաբարում **նափորտ** բառի իմաստներն են՝ «(եկեղց.) 1. կրօնաւորի վերնաշապիկ, որ կրում են եմփորոնի տակ. շորջառ, փիլոն, մեկնոց, վերարկու, 2. սկիհի ծածկոց», արդի հայերենում պահպանվել է միայն առաջին իմաստը, **պատմուճան** բառի իմաստներն են եղել՝ «1. երկար ու լայն վերնազգեստ, պարեգօտ, 2. փառաւոր՝ զարդարուն

<sup>1</sup> Արևմտահայերեն բառերի օրինակները տե՛ս Ռ. Սաքապետոյեան, Արևմտահայերեն-արևելահայերեն նոր բառարան, Ե., 2011:

<sup>2</sup> Բարբառային բառերի օրինակները տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ.1-7, Ե., 2001-2012:

զգեստ, 3. ընդհանրապես զգեստ», այժմ համարվում է մենիմաստ բառ՝ «(հնց.) երկար զգեստ, զարդարուն զգեստ, պարեգոտ» իմաստով:

Հագուստը իմաստային թեմատիկ խմբի մենիմաստ նորակազմությունները թվով գերազանցում են նորակազմ բազմիմաստ բառերին, դրանցից են՝ **ճարմանդաշղթա** «շղթայաձև ճարմանդ», **խաղաշապիկ** «մարգաշապիկ», **գիշերախալաթ** «գիշերային խալաթ», **ետնագրպան** «հետևի գրպան», **բարձրօձիք** «բարձր օձիք ունեցող», **անձրևավերարկու** «անձրևից պաշտպանող վերարկու», **գործահագուստ** «գործի՝ աշխատանքի ժամանակ հագնելու հագուստ» և այլն<sup>1</sup>:

Հագուստը իմաստային թեմատիկ խմբի բառանուններից կազմվել են բազմաթիվ դարձվածային միավորներ, որոնք հիմնականում մենիմաստ են, ինչպես՝ **աչքից քողն ընկնել** «աչքերը բացվել», **գոտին լայն կապել** «բարեկեցիկ կյանք վարել, շռայլ ապրել», **գրպանը սրբել** «մեկի փողերին տիրանալ, գրպանները դատարկել», **իրար օձիք բաց չթողնել** «իրար կաշել, իրար հետ կռվելու վիճակի մեջ լինել», **մի շապկի մեջ մեծանալ** «անբաժան, միշտ միասին լինել» և այլն<sup>2</sup>:

Այսպիսով, *հագուստ* իմաստային թեմատիկ խումբը թեև հարուստ է մենիմաստ բառերով, բայց պետք է հաշվի առնել այն հանգամանքը, որ բառի իմաստը, լինելով պատմական երևույթ, ենթակա է փոփոխության, այսինքն՝ բառը կարող է ձեռք բերել նոր իմաստ(ներ)՝ դառնալով բազմիմաստ կամ հակառակը, կորցնելով իմաստներ, կարող է դառնալ մենիմաստ:

### Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Էդ., Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 48:
2. Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հհ. 1-4, Երևան, 1969-1980:
3. Հայոց լեզվի բարբառային բառարան, հհ. 1-7, Երևան, 2001-2012:
4. Նոր բառեր (կազմ.՝ Ա. Գալստյան և ուրիշներ), Ա-Դ, Երևան, 2015-2018թթ.:

<sup>1</sup> Բոլոր նորակազմությունները տե՛ս Նոր բառեր (կազմ.՝ Ա. Գալստյան և ուրիշներ), Ա-Դ, Ե., 2015-2018թթ.:

<sup>2</sup> Բոլոր դարձվածային միավորները տե՛ս Ա. Սուքիասյան, Ա. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Ե., 1975:

- 
5. Սաքապետոյեան Ռ., Արեւմտահայերէն-արեւելահայերէն նոր բառարան, Երևան, 2011:
  6. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, 1975:

## THE MONOSEMANTIC WORDS IN THE SEMANTIC THEMATIC GROUP OF "CLOTHING"

GHAMOYAN LUSINE

*Ph.D,*

*Senior Researcher at the Institute  
of Language after H. Acharyan, NAS RA.*

e-mail: lgamoyan@mail.ru

The words of the semantic thematic group “clothing” can be monosemantic and polysemantic. Monosemantic words can be root words, derivative, complex, and compound. Some polysemantic clothing names entered Modern Armenian from an Old Armenian (Grabar). There are also many monosemantic words in Western Armenian and Armenian dialects. In the semantic group of clothing, there are many monosemantic borrowed words and new formations. Numerous monosemantic idiomatic expressions are also formed from the words of this group.

As opposed to a polysemantic word, the meaning of a monosemantic word can be determined outside of any context. Semantic thematic group of clothes is rich in meaningful words, but it must be taken into account that the meaning of the word, being a historical phenomenon, is subject to change, i.e. the word can acquire a new meaning or meanings, becoming ambiguous or, conversely, losing meanings, and thus becoming monosemantic.

**Key words:** *monosemantic, clothing, root word, derivative, complex, compound, borrowing, Western Armenian, dialect, new formation.*



## ОДНОЗНАЧНЫЕ СЛОВА В СЕМАНТИЧЕСКОЙ ТЕМАТИЧЕСКОЙ ГРУППЕ «ОДЕЖДА»

ГАМОЯН ЛУСИНЕ

*Кандидат филологических наук,  
старший научный сотрудник Института языка*

*им. Г. Ачаряна НАН РА*

электронная почта: lgamoyan@mail.ru

Слова семантической тематической группы «одежда» могут быть однозначными и многозначными. Однозначные слова могут быть корневыми, производными, сложными и составными. Некоторые многозначные названия одежды вошли в современный армянский язык от древнеармянского (грабар). Также есть много однозначных слов в западноармянском и армянских диалектах. В семантической группе "одежда" много однозначных заимствованных слов и новообразований. Из слов этой группы также образованы многочисленные однозначные идиоматические выражения.

В отличие от многозначного слова, значение однозначного слова может быть определено вне любого контекста. Семантическая тематическая группа "одежда" богата однозначными словами, но необходимо учитывать, что значение слова, как историческое явление, подвержено изменениям, т.е. слово может приобретать новое значение или значения, становясь многозначным или, наоборот, теряя смысл, может стать однозначным.

**Ключевые слова:** *однозначный, одежда, коренное слово, производное, сложное, составное, заимствование, западноармянский, диалект, новообразование.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 11.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 01.10.2021թ.: